**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԾՀԱՊՁԲ-20/8-1**

ք. Երևան 8 -ը օգոստոսի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Մ. Հակոբյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Պապ և Թոռ Գրիգորյաններ" ՍՊԸ -ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 1) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված պահեստամասեր /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 2/:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել.

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմամգիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի առավելագույն գինը կազմում է՝ 79 000 000 (յոթանասունինը միլիոն) ՀՀ դրամ:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 10-ը:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:
9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:
Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:
9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | "Պապ և Թոռ Գրիգորյաններ" ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | ք. Մասիս, Նոր Թաղամաս, 32/16 բն. 38 |
| Հ/Հ 900011144079 | "Արդշինբանկ" ՓԲԸ, Մասիս մ/ճ |
| ՀՎՀՀ 00867415 | Հ/Հ 2472900259460010 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | ՀՎՀՀ 03809214 |
| | տնօրեն |
| Մ. ՀԱԿՈԲՅԱՆ | Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ |

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-20/8-1 ծածկագրով
գնման պայմանագրի

# ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր), այդ թվում | *Չափի միավորը* | Կատալոգային համար | Միավորի գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| *1. ԲՈՒԼԴՈԶԵՐ Բ-10, S-170, 130* | | | | |
| 1 | Ականատ փական | հատ | 24-22-2 | 3500 |
| 2 | Առանցքակալի իրան | հատ | 50-19-145 | 98000 |
| 3 | Բարձր ճնշման վառելիքի պոմպի կարգավորիչ | լրկզմ | 51-06-14ՄՊ | 220000 |
| 4 | Բոցամուղ | հատ | 14-69-117-ՄՊ | 18000 |
| 5 | Գլանի գլխի միջադիր ՊԴ-23 | հատ | 700-40-20006ՄՊ | 2300 |
| 6 | Գլանիկ սերվեմեխանիզմի | հատ | 50-17-25 | 8000 |
| 7 | Գլանների բլոկի գլխիկ | հատ | 51-02-3ՄՊ | 363000 |
| 8 | Գլդոն երկկողապատ | հատ | 24-21-170ՄՊ | 149000 |
| 9 | Գործարկիչ շարժիչ | հատ | ՊԴ-23 | 880000 |
| 10 | Դանակի հեղյուս և մանեկ | լրկզմ | Մ27 | 1000 |
| 11 | Դարձիչի մատ | հատ | 50-12-581 | 36000 |
| 12 | Երկժանանիվ | հատ | 20-19-24 | 114000 |
| 13 | Թագագլխիկի մատ Բ-10 | հատ | 50-50-61 | 6500 |
| 14 | Թրթուր | հատ | 50-22-2 | 21800 |
| 15 | Թրթուրի հավաքակազմ ( աջ և ձախ ) | լրկզմ | 50-22-1ՄՊ | 1698000 |
| 16 | Թրթուրի ձգման մեխանիզմ | հատ | 50-21-420ՄՊ | 56000 |
| 17 | Թրթուրի ճնման (ձգման) մեխանիզմ | հատ | 20-21-132ՄՊ | 190000 |
| 18 | Խամութ | հատ | 17-73-127ՄՊ | 18000 |
| 19 | Խցիկի ապակիների լրակազմ | լրկզմ | 24-59-197 | 100000 |
| 20 | Ծնկաձև լիսեռ ՊԴ-23 | հատ | 03341 | 96000 |
| 21 | Կայծամոմ | հատ | Ա11-3 | 1100 |
| 22 | Կայծամոմի հաղորդալար | մետր | 10663ՄՊ | 760 |
| 23 | Կարբյուրատոր Կ-125լ | հատ | Կ-125 | 40000 |
| 24 | Կափույր արտանետիչ | հատ | 14-02-32 | 4500 |
| 25 | Կափույր ներթողող | հատ | 14-02-33-Վ | 4500 |
| 26 | Կափույրի կափարիչի ներդիր | հատ | 700-40-2896 | 2800 |
| 27 | Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ | հատ | 2224ԿՄ | 24000 |
| 28 | Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ | հատ | 228Ա | 31800 |
| 29 | Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ | հատ | 70-42314 | 15500 |
| 30 | Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10 | հատ | 70-32417 | 60000 |
| 31 | Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10 | հատ | 70-32612 | 17500 |
| 32 | Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10 | հատ | 118 | 6500 |
| 33 | Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10 | հատ | 70-32315 | 11800 |
| 34 | Կողային պտույտափոխանցիչի ժանանիվ Բ-10 | հատ | 60-19-1 | 164000 |
| 35 | Կողային պտույտափոխանցիչի ժանանիվ S-130 | հատ | 19216 | 137000 |
| 36 | Կողային պտույտափոխանցիչի նորոգման լրակազմ S-130, S-170 | լրկզմ | 1940 | 19000 |
| 37 | Կողային պտույտափոխանցիչի նորոգման լրակազմ Բ-10 | լրկզմ | 1940 | 23500 |
| 38 | Կցորդիչ սերվոմեխանիզմի | հատ | 17310 | 11000 |
| 39 | Հավաքիչի ներդիր ՊԴ-23 | հատ | 700-40-3880ՄՊ | 1900 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 40 | Հավաքիչի ներդիր | հատ | 700-40-3880ՍՊ | 1900 |
| 41 | Հարթաշերեփի բարձրացման հիդրոգլանի նորոգման լրակազմS-130 | լրկզմ | 131-26-108-02ՍՊ | 160000 |
| 42 | Հարթաշերեփի շեղածռման հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | 50-50-226 | 140000 |
| 43 | Ձգիչ անիվ S-130 | լրկզմ | 50-21-305-05ՍՊ | 387000 |
| 44 | Մագնետո Մ-149 | հատ | 372800 | 56000 |
| 45 | Մանժետ 1,2-200x240-1 Բ-10 | հատ | ԳՕՍՏ 8752-79 | 3600 |
| 46 | Մատ փական | հատ | 24-22-7 | 11000 |
| 47 | Մեկնարկիչ 42.3708.000 | հատ | 42.3708.000 | 48000 |
| 48 | Միջադիր (պղնձյա) | հատ | 40201 | 1100 |
| 49 | Մեքենաժամի հաշվիչ S-130 | հատ | ՄՎՆ-20-2 | 15500 |
| 50 | Միջուկ | հատ | 50-19-157 | 6000 |
| 51 | Մխոցի օղ Բ-10 | լրկզմ | US51-03-122ՍՊ | 32000 |
| 52 | Մխոցի օղ ՊԴ-23 | լրկզմ | 03712ՍՊ | 7700 |
| 53 | Մղանի հարթաշերեփ | հատ | 80-52-32ՍՊ | 2205000 |
| 54 | Յուղի պոմպ | հատ | 29-09-124ՍՊ | 112000 |
| 55 | Ներդրակ շարժաթևի | լրկզմ | Ա-23.01-103.160ՍԲ | 23500 |
| 56 | Շարժաթև | հատ | 51-03-112ՍՊ | 74000 |
| 57 | ՊԴ-23-ի գլանների բլոկի գլխիկ | հատ | 2240 | 41000 |
| 58 | Պտույտափոխանցիչի ժանանիվ ՊԴ-23 | հատ | 72104 | 19000 |
| 59 | Պտույտափոխանցիչի կցորդիչ հավաքակազմ ՊԴ-23 | հատ | 17-76-36 | 68000 |
| 60 | Ջրի պոմպ | հատ | 16-08-140ՍՊ | 80000 |
| 61 | Ջրի շապիկի օղ | լրկզմ | 40843 | 3500 |
| 62 | Ռադիատորի կարճախողովակ | լրկզմ | 42701 | 8000 |
| 63 | Ռադիատորի հավաքակազմ | հատ | 130ՌԻ.13.010-1Տ | 508000 |
| 64 | Ռադիատորի միջուկ | հատ | 240 8-ՍԲ/66 | 190000 |
| 65 | Սկավառակ (կողային պտույտափոխանցիչի ) | հատ | 50-10-111ՍՊ | 5300 |
| 66 | Սկավառակ (կողային պտույտափոխանցիչի ) մետաղական | հատ | 50-10-110ՍՊ | 5300 |
| 67 | Սռնակային զույգ Բ-10 | հատ | 16-67-102/108 | 11800 |
| 68 | Սռնակային զույգ S-130, S-170 | հատ | 51-67-154ՍՊ | 6100 |
| 69 | Տանող անիվ Բ-10 | լրկզմ | 50-19-99 | 164000 |
| 70 | Տանող անիվ S-130 | լրկզմ | 50-19-99 | 164000 |
| 71 | Տանող անիվի ցամաստղների հավաքակազմ | լրկզմ | 24-19-22 | 8900 |
| 72 | Տարվող կցորդիչի սկավառակ S-130 | հատ | 18-14-135ՍՊ | 35000 |
| 73 | Տուրբոճնշակ 11Ն3 | հատ | 11Ն3 | 185000 |
| 74 | Փխրեցուցիչի հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | 50-50-225 | 7000 |
| 75 | Փոխանցման տուփի վերևի լիսեռի հավաքակազմ | լրկզմ | 50-12-246ՍՊ | 189000 |
| 76 | Փոխանցման տուփի ներքևի լիսեռի հավաքակազմ | լրկզմ | 50-12-224ՍՊ | 133000 |
| 77 | Փոխանցման տուփի վերանորոգման լրակազմ ԿՊՊ Բ-10 | լրկզմ | 1213 | 1900 |
| 78 | Փոխանցումների փոխարկման երկժանի (դարձիչ) | հատ | 50-12-565 | 12000 |
| 79 | Փոկ գեներատորի | հատ | 11x12.5x1090 | 1300 |
| 80 | Փոկ հովհարի | հատ | 11x16x1650 | 2200 |
| 81 | Փոշարար | հատ | 14-69-22 | 5300 |
| 82 | Օժանդակիչ գլորն Բ-10 | հատ | 50-21-416ՍՊ | 143000 |
| 83 | Օժանդակիչ գլորն S-130 | հատ | 24-21-171ՍՊ | 100000 |
| *2. ԲՈՒԼԴՈԶԵՐ <<ԿԱՄԱՑՈ Դ-355>>* | | | | |
| 1 | Անվակունդ | հատ | 195-27-11253 | 1005000 |
| 2 | Ապահովիչ կափույրի հավաքակազմ | հատ | 195-13-16100 | 408000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Արգելակման թմբուկ | հատ | 195-27-12226 | 2191000 |
| 4 | Արգելակման թմբուկ | հատ | 195-22-11114 | 1143000 |
| 5 | Արգելակման ժապավեն | լրկզմ | 195-30-00057 | 842000 |
| 6 | Արգելակման ժապավենի մակադրակ | հատ | 195-33-11163 | 40000 |
| 7 | Արգելակման տուփի ձախ և աջ հավաքակազմ | հատ | 195-33-00051/61 | 2359000 |
| 8 | Բույթ ընդհանուր | հատ | 195-32-21151 | 23600 |
| 9 | Բույթ հիմնական | հատ | 195-32-31390 | 53900 |
| 10 | Գլանի խցիչ | լրկզմ | 6127-21-2251 | 66900 |
| 11 | Գլանների գլխիկ | լրկզմ | 6128-11-1012 | 3033000 |
| 12 | Գլդոն մերկկողապատ | հատ | 195-30-00453 | 554000 |
| 13 | Գլդոն միակողապատ | հատ | 195-30-00440 | 554000 |
| 14 | Ընդհանուր ակոսատ | հատ | 195-32-21141 | 53900 |
| 15 | Թրթուրի հավաքակազմ | լրկզմ | 195-32-02709 | 7535000 |
| 16 | Թրթուրի հեղույս և մանեկ | լրկզմ | 195-32-11210 | 7500 |
| 17 | Թրթուրի ձգման մեխանիզմ | հատ | 195-30-14170 | 539000 |
| 18 | Թրթուրի օղակ | լրկզմ | 195-32-11127/37 | 107000 |
| 19 | Ժանանիվ | հատ | 195-27-12121 | 118000 |
| 20 | Ժանանիվ | հատ | 195-27-12435 | 158000 |
| 21 | Ժանանիվ | հատ | 195-27-12372 | 237000 |
| 22 | Կարգավորիչ կափույրի հավաքակազմ | հատ | 195-15-00032 | 1145000 |
| 23 | Կարգավորիչ կափույրի հավաքակազմ | հատ | 195-13-16401 | 217000 |
| 24 | Կողային պտույտափոխանցիչի խցուկ | հատ | 195-27-12760 | 201000 |
| 25 | Կողային պտույտափոխանցիչի նորոգման լրակազմ | լրկզմ | 170-27-12511 | 1516000 |
| 26 | Հարթաշերեփի բարձրացման բարձր ճնշման ճկախողովակ | հատ | 07118-21416 | 62900 |
| 27 | Հարթաշերեփի բարձրացման հիդրոգլան | հատ | 195-63-13700 | 3236000 |
| 28 | Հարթաշերեփի բարձրացման հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | 195-63-05120 | 539000 |
| 29 | Հարթաշերեփի բարձրացման օժանդակ կափույր | հատ | 702-12-13000 | 1213000 |
| 30 | Հարթաշերեփի բարձրացման օժանդակ կափույրի նորոգման լրակազմ | լրկզմ | 702-12-13000 | 539000 |
| 31 | Հարթաշերեփի լծակ | հատ | 195-71-31311 | 336000 |
| 32 | Հարթաշերեփի լծակ աջ | հատ | 195-71-31272 | 336000 |
| 33 | Հարթաշերեփի լծակ ձախ | հատ | 195-71-31242 | 336000 |
| 34 | Հարթաշերեփի շեղածռման բարձր ճնշման ճկախողովակ | հատ | 195-78-42111 | 39000 |
| 35 | Հարթաշերեփի շեղածռման հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | 195-63-05130 | 539000 |
| 36 | Հիդրոբաքի կափույր | հատ | 701-43-24001 | 1145000 |
| 37 | Հիդրոբաքի կափույր | հատ | 701-43-21003 | 943000 |
| 38 | Հիդրոտրանսմիսիա | հատ | 195-13-12001 | 4700000 |
| 39 | Հիդրոտրանսմիսիայի բարձր ճնշման ճկախողովակ | հատ | 195-49-11440 | 31000 |
| 40 | Հիդրոտրանսմիսիայի ներփչման պոմպ | հատ | 138-13-13500 | 404000 |
| 41 | Հիդրոտրանսմիսիայի նորոգման լրակազմ | լրկզմ | 195-13-12112 | 2696000 |
| 42 | Ձգիչ անիվ | հատ | 195-30-00283 | 2776000 |
| 43 | Յուղի պոմպ | հատ | 6128-52-1013 | 991000 |
| 44 | Շարժիչի առջևի խցուկ | հատ | 6127-21-3510 | 33000 |
| 45 | Շարժիչի հետևի խցուկ | հատ | 6128-21-4230 | 53900 |
| 46 | Պարկուճ | հատ | 6128-21-2221 | 134000 |
| 47 | Ջրի պոմպ | հատ | 6127-61-1008 | 554000 |
| 48 | Սեգմենտ | հատ | 195-27-12463 | 58800 |
| 49 | Սեգմենտի հեղույս և մանեկ | լրկզմ | 195-27-12632 | 8900 |
| 50 | Սելեկտորային կափույր | հատ | 700-61-61000 | 539000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 51 | Սելեկտորային կափույր | հատ | 700-61-13005 | 539000 |
| 52 | Վառելիքի զտիչ | հատ | 600-311-8281 | 17000 |
| 53 | Վերջնական փոխանցման ժանանիվ | հատ | 195-27-11242 | 713000 |
| 54 | Տուրբաձնշակ | լրկզմ | 6502-12-9004 | 1340000 |
| 55 | Փխրեցուցիչի կառավարման վահանակ | հատ | 175-61-13950 | 336000 |
| 56 | Փոխանցման տուփի մխոց | հատ | 195-15-12791 | 594000 |
| 57 | Օդի զտիչի տարր | լրկզմ | 6128-81-7042 | 73000 |
| 58 | Օժանդակիչ գլդոն | հատ | 195-30-00106 | 276000 |
| | *3. ԲՈՒԼԴՈԶԵՐ <<ՇԱՆՏՈՒԻ ՄԴ 42-4>>* | | | |
| 1 | Երկկողապատ գլդոն | հատ | 31Ի-40-22000 | 772000 |
| 2 | Թագագլխիկի մատ | հատ | 175-78-21740 | 13000 |
| 3 | Հիդրավլիքի զտիչ | հատ | Պ175-60-27380 | 20000 |
| 4 | Ղեկակառավարման պոմպ | հատ | 07440-72202 | 690000 |
| 5 | Միակողապատ գլդոն | հատ | 31Ի-40-21000 | 690000 |
| 6 | Սեգմենտի հեղույս և մանեկ | լրկզմ | 195-60-16920 | 6700 |
| 7 | Վառելիքի զտիչ | հատ | 612600081335 | 22000 |
| 8 | Տրանսմիսիայի զտիչ | հատ | 175-49-11580 | 18700 |
| 9 | Փխրեցուցիչի թագագլխիկ | հատ | 31Ի-89-00008 | 66000 |
| 10 | Օդ | հատ | 195-27-12210 | 22000 |
| | *4. ՇԱՐԺԻՉ <<ՏՄԶ 8486.10-02>>* | | | |
| 1 | Արտաթորող կափույր | հատ | 840.1007012-11 | 5700 |
| 2 | Արտաթորող կափույրի լծակ | հատ | 840.1007144-20 | 2400 |
| 3 | Արտաթորող կափույրի լծակի առնի | հատ | 840.1007100-10 | 29000 |
| 4 | Արտաթորող փականի ուղղորդող ներդրուկ | հատ | 840.1007 033 | 8900 |
| 5 | Բաշխիչ լիսեռ | հատ | 846.1006015 | 384000 |
| 6 | Բոցամուղ | հատ | 181.1112010-11 | 19600 |
| 7 | Գլանների բլոկի գլխիկ | հատ | 840.1003010-20 | 274000 |
| 8 | Գլանների գլխիկի միջադիր | հատ | 840.1003213-02 | 1500 |
| 9 | Ծնկաձև լիսեռ առանցքակալով և ժանանիվով հավաք. | հատ | 8421.1005007 | 1531000 |
| 10 | Ծնկաձև լիսեռի ներքևի հենակի տափօղակ | հատ | 840.1005194-10 | 4000 |
| 11 | Ծնկաձև լիսեռի վերևի հենակի տափօղակ | հատ | 840.1005193 | 4000 |
| 12 | Կարտերի միջադիր | հատ | 842.1009072 | 5700 |
| 13 | Հրիչի հավաքակազմ | հատ | 840.1007 180-10 | 51000 |
| 14 | Հրիչի ձող | հատ | 840.1007 174-02 | 51000 |
| 15 | Հրիչի ձող | հատ | 840.1007 176-02 | 51000 |
| 16 | Հրիչի ուղղորդիչ | հատ | 8401.1007250-10 | 4000 |
| 17 | Հրիչի ուղղորդիչ | հատ | 840.1007 032 | 4000 |
| 18 | Մեկնարկիչ | հատ | 2501.3708-21 | 176000 |
| 19 | Մխոց | հատ | 8401.1004015-01 | 35000 |
| 20 | Յուղի զտիչի տարր | հատ | 840.1012040-14 | 2000 |
| 21 | Ներդրակ արմատական | լրկզմ | 840.1005170 | 26900 |
| 22 | Ներդրակ շարժաթևի | լրկզմ | 840.1004058 | 26900 |
| 23 | Ներթողող կափույր | հատ | 840.1007010-11 | 11000 |
| 24 | Ներթողող կափույրի լծակ | հատ | 840.1007114-20 | 35000 |
| 25 | Ներթողող կափույրի լծակի հենակ | հատ | 840.1007106 | 19600 |
| 26 | Ներթողող կափույրի լծակի առնի | հատ | 840.1007091-10 | 35000 |
| 27 | Շարժաթև | հատ | 8401.1004050 | 156000 |
| 28 | Շարժիչի առջևի խցուկ | հատ | 840.1005034 | 3200 |
| 29 | Շարժիչի հետևի խցուկ | հատ | 840.1005160 | 7300 |
| 30 | Շարժիչի միջադիրների հավաքակազմ | լրկզմ | 840.1000001 | 141000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 31 | Պարկուճ | հատ | 840.1002021-11 | 42000 |
| 32 | Ջրի և յուղի հովացուցիչ | հատ | 842.1013600-10 | 510000 |
| 33 | Ջրի պոմպի նորոգման լրակազմ | լրկզմ | 8486-1307001 | 137000 |
| 34 | Սուզակային զույգ | հատ | 421-1111150-30 | 16000 |
| 35 | Վառելիքի պոմպի բաժանմունք | հատ | 17.1111130-02 | 20400 |
| 36 | Վառելիքի զտիչի տարր | հատ | 840.1117040-01 | 1300 |
| 37 | Վառելիքի ներցայտման առաջանցման կցորդիչ | հատ | 842.1121010-10 | 158000 |
| 38 | Տուրբոճնշակ | հատ | 8481.1118010 | 324000 |
| 39 | Փոկ I-11x10-1180 | հատ | 25 6421 1118 | 1900 |
| 40 | Փոկ I-11x10-900 | հատ | I-11x10-900 | 1100 |
| 41 | Փոշաբար | հատ | 26.1112114-40 | 13000 |
| 42 | Օդի զտիչի տարր | հատ | 6510-1109080 | 11000 |
| | *5. ԲՈՒԼԴՈԶԵՐ <<ԴՏ-75>>* | | | |
| 1 | Ապակիների լրակազմ | լրկզմ | 88.45.176 | 99000 |
| 2 | Առանցք | հատ | 85-31.016Ա | 19600 |
| 3 | Արգելակման ժապավեն | մետր | 162,38,060 | 6100 |
| 4 | Գլանի խցիչ Ա-41 | լրկզմ | արտ. 406 | 4000 |
| 5 | Գլանի միջադիր ՊԴ-10 | հատ | Դ24 Ս18-Ա | 3600 |
| 6 | Գլոճ հենակ | հատ | 54.31-021Ի | 30000 |
| 7 | Գործարկիչ շարժիչ ՊԴ-10 | լրկզմ | Դ24 Ս01-4 | 156000 |
| 8 | Զտիչ տարր | հատ | 840101-2031-12 | 630 |
| 9 | Զտիչ տարր | հատ | 41-75-Ս1-01 | 630 |
| 10 | Զտիչ տարր ԷՖՏ-75Ա | հատ | 24-111-70-30 | 1100 |
| 11 | Թրթուրի մատ | հատ | Ա34-2-01Գ | 1900 |
| 12 | Թրթուրի օղակ | հատ | 77. 34. 501 | 12000 |
| 13 | Խցօղակ 1.1-140x170-4 | հատ | 1.1-140x170-4 | 1700 |
| 14 | Կողային պտտյտափոխանցիչի նորոգման լրակազմ | լրկզմ | 79.39.04ՕՌ | 57000 |
| 15 | Կցորդիչի սեղմովի սկավառակ | հատ | Ա52,22,101 | 13000 |
| 16 | Հարթաշերեփի բարձրացման հիդրոգլան | հատ | Գ880.55x710.31 | 131000 |
| 17 | Հարթաշերեփի դանակ | լրկզմ | 150x16x18 | 71000 |
| 18 | Հետընթացքի երկժանի | հատ | 77.37.015A | 2800 |
| 19 | Հիդրոբաժանարարի նորոգման լրակազմ | հատ | 78.64.001 | 59600 |
| 20 | Հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | ՑՍ - 75/ ՑՍ - 110 | 8900 |
| 21 | Մեկնարկիչ ՊԴ-10-ի | հատ | Ստ362-3708000 | 35900 |
| 22 | Միֆտ Ա-41 | հատ | 01Մ 0305-4 | 13000 |
| 23 | Յուղի զտիչ տարր | հատ | ԷՖՄ 019-1012040 | 540 |
| 24 | Յուղի պոմպ | հատ | Ա-41/Ա01 | 51000 |
| 25 | Ներդրակ արմատական Ա-41 | լրկզմ | Ա23.01-116-45/465 | 15000 |
| 26 | Ներդրակ շարժաթևի Ա-41 | լրկզմ | Ա23.01-93-01 | 6900 |
| 27 | Շարժիչի միջադիրների հավաքակազմ | լրկզմ | Ա-41/Ա01 | 11000 |
| 28 | ՈՒղղորդող անիվ աջ հավաքակազմ | հատ | 85.32.001 | 68000 |
| 29 | ՈՒղղորդող անիվ ձախ հավաքակազմ | հատ | 85.32.002 | 68000 |
| 30 | Պարկուճ Ա41 | հատ | 01Մ 0102 | 13000 |
| 31 | Ռադիատորի կարճախողովակ | լրկզմ | ԴՏ75, Ա41 | 7700 |
| 32 | Վառելիքի բարձր ճնշման պոմպ | հատ | Ա-41/Ա01 | 303000 |
| 33 | Վառելիքի մղման պոմպ | հատ | 16-Ս30-8Ա-01 | 11800 |
| 34 | Վառելիքի ցածր ճնշման պոմպ | հատ | 16Ս30 | 5900 |
| 35 | Տանող անիվ | հատ | 112.39.132-2 | 59000 |
| 36 | Տանող անիվի լիսեռ | հատ | 77.39.019 | 33000 |
| 37 | Տանող անիվի լիսեռ | հատ | 77.39.020 | 200000 |
| 38 | Փոխանցման տուփի նորոգման լրակազմ | լրկզմ | 89.37.001 | 116000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 39 | Փոխանցման տուփի նորոգման լրակազմ | լրկզմ | 79.37.01 | 70000 |
| 40 | Փոշարար | հատ | 11ՏԱ-20ս 1-02 | 3600 |
| **6. ԷՔՍԿԱՎԱՏՈՐ <<ԷՕ-4124>>** | | | | |
| 1 | Գլդոն | հատ | 4121Բ.16.16.000 | 114000 |
| 2 | Հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | 100.63.400 | 749000 |
| 3 | Հիդրոպոմպ կարգավորվող | լրկզմ | 321.224.14 | 356000 |
| 4 | Հիդրոպոմպ հիմնական | լրկզմ | 313.3.113.5004 | 1982000 |
| 5 | Հիդրոպոմպի նորոգման լրակազմ | լրկզմ | Է4124Կ-03Ռ | 749000 |
| 6 | Տանող անիվ | հատ | 4124.16.34.000 | 201000 |
| **7. ԷՔՍԿԱՎԱՏՈՐ <<ԵԿ-14>>** | | | | |
| 1 | Յուղի զտիչ տարր | հատ | 240-1404010-Ա | 13800 |
| 2 | Շերեփի ատամ | հատ | 41.21.57.60.003 | 28500 |
| 3 | Շերեփի թազագլխիկ | հատ | 314-03-23.21.001 | 22800 |
| 4 | Վառելիքի զտիչ տարր | հատ | ՖՏ020-1117010 | 26900 |
| **8. ԷՔՍԿԱՎԱՏՈՐ <<ԷՕ-2621>>** | | | | |
| 1 | Կիսասռնիի թևք | հատ | 50-2407018 | 134800 |
| 2 | Կողային դանակ | լրկզմ | Դ-579.0100-07 | 17000 |
| 3 | Հիդրոգլան | հատ | 13.6500.000 | 118000 |
| 4 | Հիդրոգլան | հատ | 13.6100.000 | 158000 |
| 5 | Հիդրոգլան | հատ | 13.0920.000 | 134000 |
| 6 | Հիդրոգլան | հատ | 13.6110.000 | 125000 |
| 7 | Հիդրոգլան | հատ | 13.6600.000 | 101000 |
| 8 | Հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | 110x56x140,110x56x1120 | 7300 |
| 9 | Հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | 80x56x280,80x56x630,<br>80x56x900 | 6500 |
| 10 | Միջնամասի դանակ | լրկզմ | Դ-579.0100-06 | 79000 |
| 11 | Յուղի զտիչ | հատ | 240-1404010-Ա | 6500 |
| 12 | Յուղի պոմպ | հատ | 245-1403010 | 51000 |
| 13 | Ջրի պոմպ | հատ | 240-1307010 | 35000 |
| 14 | Սուզակային զույգ | հատ | ՌԻ16Մ-15 | 26900 |
| 15 | Վառելիքի զտիչ | հատ | ՖՏ020-1117010 | 13800 |
| 16 | Վառելիքի ցածր ճնշման պոմպ | հատ | 4ՌԻՏՆՄ-Տ-1111005 | 15500 |
| 17 | Փոխանցման տուփի նորոգման լրակազմ | լրկզմ | 238-Ռ-1700001-04 | 178000 |
| 18 | Փոշարար | հատ | 6Ա1-20ս2-40 | 19600 |
| **9. ԷՔՍԿԱՎԱՏՈՐ <<HYUNDAI R260LC-9S>>** | | | | |
| 1 | Գծային զտիչ | հատ | 31Q6-20340 | 15500 |
| 2 | Թազագլխիկի մատ | հատ | E262-5004 | 4900 |
| 3 | Թազագլխիկի մատի կալան | հատ | 61EH-11150 | 3200 |
| 4 | Կողային դանակ | հատ | 63E1-3534 | 40000 |
| 5 | Հիդրավլիկ զտիչ | հատ | 31N4-01460 | 40000 |
| 6 | Հիդրավլիկ զտիչ | հատ | 31N8 - 01360 | 5700 |
| 7 | Յուղի զտիչ | հատ | 11E1-70140 | 11400 |
| 8 | Շերեփի թազագլխիկ | հատ | 61N8-31310 | 43000 |
| 9 | Վառելիքի զտիչ | հատ | 11E1-70210 | 8900 |
| 10 | Վառելիքի զտիչ | հատ | 11LB-20310 | 15500 |
| 11 | Վառելիքի զտիչ | հատ | 11E1-70010 | 5700 |
| 12 | Օդի զտիչ | հատ | 11N6-27030 | 27700 |
| 13 | Օդի զտիչ | հատ | 11N6-27040 | 15500 |
| 14 | Օդորակիչի զտիչ | հատ | 11Q6-90510 | 15500 |
| **10. ԳՐԵՅԴԵՐ <<ԴԶ 99,122,143>>** | | | | |
| 1 | Արգելակման համակարգ | լրկզմ | 225.24.00.00.000 | 146000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Բոցամուղ | հատ | 432191327 | 15500 |
| 3 | Գլանի խցիչ ԴԶ-122 | լրկզմ | 01181178 | 1600 |
| 4 | Դիմացի հարթաշերեփի դանակ | հատ | ՌԻ62.10.04.30.01.001-03 | 54000 |
| 5 | Դիմացի հարթաշերեփի դանակ | հատ | 225.21.00.00.008 | 54000 |
| 6 | Կողային դանակ ձախ | հատ | ԴԶ-122Ա.02.09.002-01 | 19000 |
| 7 | Կողային դանակ ձախ | հատ | 225.07.04.00.004 | 19000 |
| 8 | Կողային դանակ աջ | հատ | ԴԶ-122Ա.02.09.004-01 | 19000 |
| 9 | Կողային դանակ աջ | հատ | 200.07.04.00.004-01 | 23000 |
| 10 | Հիդրոբաշխիչ | հատ | ԴԶ-122Ա-6.08.02.010 | 184000 |
| 11 | Հիդրոզտիչ | հատ | ՀՖ28857 | 4000 |
| 12 | Մեկնարկիչ | հատ | 1231005 | 186000 |
| 13 | Միջին հարթաշերեփի դանակ | լրկզմ | 557.102.01.26 | 53000 |
| 14 | Միջին հարթաշերեփի դանակ | հատ | 225.07.04.00.005 | 53000 |
| 15 | Մխոց ԴԶ-122 | հատ | 40278600 | 13000 |
| 16 | Մխոցի մատ ԴԶ-122 | հատ | 4202005 | 3200 |
| 17 | Մխոցի օղ ԴԶ-122 | լրկզմ | 800034410000 | 49000 |
| 18 | Յուղի զտիչ | հատ | ԼՖ4054 | 35000 |
| 19 | Շարժիչի միջադիրների հավաքակազմ ԴԶ-122 | լրկզմ | 01-36002-01 | 9500 |
| 20 | Պարկուճ ԴԶ-122 | հատ | 04 0110 101300 | 13000 |
| 21 | Ջրի պոմպ ԴԶ-122 | հատ | 04256850 | 47000 |
| 22 | Վառելիքի բարձր ճնշման պոմպի սեկցիա | հատ | ՊՖՄ1Պ100Ա2005 | 11000 |
| 23 | Վառելիքի բարձր ճնշման պոմպի նորոգման լրակազմ | լրկզմ | Ա-01ՄՍ | 58000 |
| 24 | Վառելիքի զտիչ | հատ | ՖՖ5074 | 29000 |
| 25 | Փոշաբար | հատ | Ա-01ՖՄՍ | 3000 |
| 26 | Օդի զտիչ | հատ | 191-1-09 | 13500 |
| | ***11. ԷԼԵԿՏՐՈԱԳՐԵԳԱՏՆԵՐ <<ԱԴ-20,ԱԴ-30,ԱԴ-62>>*** | | | |
| 1 | Բարձր ճնշման վառելիքի մղման պոմպ ՌԻՏՆ-5 | հատ | 1101150ՍԲ | 137000 |
| 2 | Էլեկտրոմեկնարկիչ 362 Ա (Դ-65 շարժիչի համար) | հատ | 12.3708102 | 89000 |
| | ***12. ՏՐԱԿՏՈՐ <<ՎՏԶ-2049>>*** | | | |
| 1 | Առաջնային լիսեռ | հատ | Ա25.37.229 | 62000 |
| 2 | Արգելակեղ սկավառակ | հատ | Ա59.01.200A-01 | 4000 |
| 3 | Երկրորդային լիսեռ | հատ | 7.37.119 | 32600 |
| 4 | Մխոց | հատ | Դ144-1004021 | 15500 |
| 5 | Մխոցի օղ | լրկզմ | Դ144-1004060ԲI | 17000 |
| 6 | Յուղի զտիչ | հատ | Д37M-1407500 | 26900 |
| 7 | Շարժիչի գլխիկ | հատ | Դ144-1003008ՍԲ | 46000 |
| 8 | Պարկուճ | հատ | Դ145S-1002021 | 35000 |
| 9 | Վառելիքի բաքի զտիչ | հատ | T-40-1101170-A | 1600 |
| 10 | Տարվող կցորդիչի սկավառակ | հատ | 45-1604040СБ | 85000 |
| 11 | Փոխանցման տուփի նորոգման լրակազմ | լրկզմ | 238.Ռ-1700001-04 | 8900 |
| 12 | Օդի զտիչ | հատ | A-41,01M 440-1233 | 4900 |
| | ***13. ԱՎՏՈԿՌՈՒՆԿ <<ՄԿՏ-25.3 Կամազ-53228>>*** | | | |
| 1 | Հենասյան տեղաշարժման հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | Ռ/Կ-ԿՍ55713-63-40 | 26000 |
| 2 | Հենասյան հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | Ռ/Կ-ԿՍ55713-125-100 | 26000 |
| 3 | Ճոպանի անիվ | հատ | У2.48.63.050-03 | 156000 |
| 4 | Սլաքի բարձրացման հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | Ռ/Կ-ԿՍ55713-22-160 | 22800 |
| 5 | Սլաքի տեղաշարժման հիդրոգլանի նորոգման լրակազմ | լրկզմ | Ռ/Կ-ԿՍ55713-150-125 | 19600 |
| | ***14. ՄԴԿ-3 <<ՍՏՏ>>*** | | | |
| 1 | Աշխատանքային օրգանի ռոտորի առանցքակալ | լրկզմ | 401.42.2 աբ-2 | 832000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Ընթացքային մասի հիդրոշարժիչ | հատ | БК 295711 | 705000 |
| 3 | Հիդրոշարժիչ | հատ | БК2.967.016 | 753000 |
| *15. ԳՄՋ-2 <<ՄԱՌԻ>>* | | | | |
| 1 | Աշխատանքային օրգանի հիդրոպոմպ | հատ | 465K | 776000 |
| *16. ԻՄՌ-2 <<Տ-72>>* | | | | |
| 1 | Կենտրոնախույս միացային կարգավորվող հիդրոպոմպ | հատ | 310.112 | 689000 |
| *17. ՏԵԽ. ՈՒՆԵՑՎԱԾՔ* | | | | |
| 1 | Առասան չորսճյուղանի, կեռերով, մինչև 16տ բեռնաբարձման | լրկզմ | 16 տ 4 ՄԿ | 161000 |
| 2 | Առասան չորսճյուղանի, կեռերով, մինչև 25տ բեռնաբարձման | լրկզմ | 25 տ 4 ՄԿ | 201000 |
| 3 | Բարձր ճնշման ճկախողովակ | հատ | U32Լ1410 | 6400 |
| 4 | Բարձր ճնշման ճկախողովակ | հատ | U24 Լ1010 | 4000 |
| 5 | Բարձր ճնշման ճկախողովակ | հատ | U32Լ1010 | 5200 |
| 6 | Բարձր ճնշման ճկախողովակ | հատ | U32Լ1210 | 6000 |
| 7 | Բարձր ճնշման ճկախողովակ | հատ | U41Լ1010 | 9600 |
| 8 | Կտրող քար | հատ | 180 մմ | 800 |
| 9 | Կտրող քար | հատ | 125 մմ | 700 |
| 10 | Պոմպ ՆՇ-100 | հատ | ԳՈՍՏ 100-80 | 60000 |
| 11 | Պոմպ ՆՇ-32 | հատ | ԳՈՍՏ 32-82 | 21000 |
| 12 | Պոմպ ՆՇ-50 | հատ | ԳՈՍՏ 50-82 | 27000 |
| 13 | Ցոլապատեր | հատ | ՖԳ-304/305 | 7600 |
| 14 | Հատիչ | հատ | 220մմx20մմ | 1100 |
| 15 | Հատիչ | հատ | 300մմx26մմ | 1300 |
| 16 | Մուրճ | հատ | 5.8կգ-6կգ | 4400 |
| Ընդամենը՝ առավելագույն գումարը | | | 79 000 000 (յոթանասունինը միլիոն) ՀՀ դրամ | |

Ապրանքի մատակարարումը կիրականացվի 2016թ. 3-րդ և 4-րդ /բայց ոչ ուշ քան 10.12.2016թ./ եռամսյակներում ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված հայտերի

**Ծանոթություն.**

- Ձեռք բերվող պահեստամասերի քանակները կկանոնակարգվեն ՀՀ ԶՈՒ ԻԶՎ կողմից տրվող հայտերով, որոնք մատակարարի կողմից համաձայն հայտերի կտրամադրվեն պահանջ ներկայացնելուց 20-օրյա ժամկետում,
- ցանկում նշված պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված և պիտանելիությունը երաշխավորվի մատակարարի կողմից:
- վերոնշյալ բոլոր պահեստամասերը պետք է հանձնվեն ԻԶՎ կենտրոնական պահեստ, որը գտնվում է ք. Էջմիածին Իսի-Լե-Մուլինոյի փողոց 7,

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

**Մ. ՀԱԿՈԲՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

"Պապ և Թոռ Գրիգորյաններ" ՍՊԸ
ք. Մասիս, Նոր Թաղամաս, 32/16 բն. 38
"Արդշինբանկ" ՓԲԸ, Մասիս մ/ճ
Հ/Հ 2472900259460010
ՀՎՀՀ 03809214
տնօրեն

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-20/8-1 ծածկագրով
գնման պայմանագրի

# ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | *Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
| | Զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր), այդ թվում՝ | | | | | |
| 1 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԲՈՒԼԴՈԶԵՐ Բ -10, Տ -170,130'* | 24000000 | 24000000 | 30000000 | 30000000 | 30000000 |
| 2 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԲՈՒԼԴՈԶԵՐ ԿԱՄԱՑՈ Դ- 355* | 6480000 | 6480000 | 8100000 | 8100000 | 8100000 |
| 3 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԲՈՒԼԴՈԶԵՐ ՇԱՆՏՈՒԻ ՍԴ 42-4* | 1968000 | 1968000 | 2460000 | 2460000 | 2460000 |
| 4 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ՇԱՐԺԻՉ 'ՏՄՁ 8486.10-02'* | 2800000 | 2800000 | 3500000 | 3500000 | 3500000 |
| 5 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԲՈՒԼԴՈԶԵՐ 'ԴՏ - 75'* | 12800000 | 12800000 | 16000000 | 16000000 | 16000000 |
| 6 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԷՔՍԿԱՎԱՏՈՐ 'ԷՕ - 4124'* | 600000 | 600000 | 750000 | 750000 | 750000 |
| 7 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԷՔՍԿԱՎԱՏՈՐ 'ԵԿ -14'* | 280000 | 280000 | 350000 | 350000 | 350000 |
| 8 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԷՔՍԿԱՎԱՏՈՐ 'ԷՕ - 2621'* | 280000 | 280000 | 350000 | 350000 | 350000 |
| 9 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԷՔՍԿԱՎԱՏՈՐ 'HYUNDAI R260LC-9S'* | 640000 | 640000 | 800000 | 800000 | 800000 |
| 10 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԳՐԵՅԴԵՐ 'ԴԶ 99,122,143'* | 640000 | 640000 | 800000 | 800000 | 800000 |
| 11 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԷԼԵԿՏՐՈԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԱԴ-20, ԱԴ-30, ԱԴ-62* | 320000 | 320000 | 400000 | 400000 | 400000 |
| 12 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ՏՐԱԿՏՈՐ ՎՏԶ-2049* | 1680000 | 1680000 | 2100000 | 2100000 | 2100000 |
| 13 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԱՎՏՈԿՌՈՒՆԿ ՄԿՏ-25.3 Կամազ – 53228* | 480000 | 480000 | 600000 | 600000 | 600000 |
| 14 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ՄԴԿ-3 ՍՏՏ* | 3152000 | 3152000 | 3940000 | 3940000 | 3940000 |
| 15 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ԳՄԶ-2 ՍԱՌԻ* | 784000 | 784000 | 980000 | 980000 | 980000 |
| 16 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ | 696000 | 696000 | 870000 | 870000 | 870000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տեխնիկայի համար՝ *ԻՄՌ-2 Տ-72* | | | | | |
| 17 | Պահեստամասեր՝ նախատեսված հետևյալ տեխնիկայի համար՝ *ՏԵԽ.ՈՒՆԵՑՎԱԾՔ* | 5600000 | 5600000 | 7000000 | 7000000 | 7000000 |

*CPV-ի կոդը՝ 34911150/1/4/1*

- *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ

**Մ. ՀԱԿՈԲՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

"Պապ և Թոռ Գրիգորյաններ" ՍՊԸ
ք. Մասիս, Նոր Թաղամաս, 32/16 բն. 38
"Արդշինբանկ" ՓԲԸ, Մասիս մ/ճ
Հ/Հ 2472900259460010
ՀՎՀՀ 03809214
տնօրեն

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-20/8-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ________________________

______________________________

հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ________________________

______________________________

հվհհ______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«      » «                    » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս _______________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՇՀԱՊՁԲ-20/8-1 ծածկագրով
գնման պայմանագրի

## ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ------------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն